★ ★

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ Հ. ՊՈՂՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկերնե՛ր։ Ընկ. Բաբաջանյանն իր զեկուցման մեջ, և ելույթ ունեցող մյուս ընկերները միանգամայն ճիշտ կերպով խիստ քննադատության ենթարկեցին մեզ մոտ մենդել-մորգանյան ուղղությունը, քրոմոզոմային տեսության կողմնակիցների աշխատությունները, ինչպես նաև իմ դիսերտացիոն աշխատանքը և մանկավարժական գործունեությունն այդ ուղղությամբ։

Իմ դիսերտացիայի նպատակն էր պարզել Դ. Ֆինեվրիզի բնական պոպուլյացիաներում տարված քրոմոզոմային, ստրուկտուրային փոփոխությունները և միջավայրի էկոլոգիական ֆակտորների դերը (տեմպերատուրա, խոնավություն, տեղի բարձրություն ծովի մակերևույթից) նրանց տարածման գործում։ Իմ այս աշխատանքի մեջ ես զարգացրել եմ այն միտքը, որ կարիոտիպի էվոլուցիան կապված է քրոմոզոմային ստրուկտուրային փոփոխությունների հետ, հետևապես հենվել եմ քրոմոզոմային տեսության վրա, որն այստեղ իրավամբ քննադատության ենթարկվեց։ Ահա իմ աշխատանքի հիմնական սխալը, որն արտահայտվել է նաև իմ մանկավարժական գործունեության մեջ։

Իմ գիտական աշխատանքը զուտ տեսական է եղել ու գյուղատնտեսական պրակտիկայից կտրված. և իրավացիորեն այն այժմ քննադատվում է։

Միանգամայն ազնվորեն և բոլշևիկյան գիտակցությամբ ընդունում եմ իմ գիտական ու մանկավարժական գործունեության նկատմամբ սեսիայում առաջադրված սկզբունքային մեղադրանքները, լրիվ կերպով միանում եմ սեսիայի որոշումներին, որը հանդիսանում է մեր պարտիայի գիծը բիոլոգիական գիտության մեջ։ Պատրաստ եմ ամբողջովին վերակառուցել իմ աշխատանքները, վերացնելով սխալները, զինվել մարքս-լենինյան թեորիայով և պայքարել սովետական առաջավոր բիոլոգիական գիտության՝ միչուրինյան գիտության տարածման համար, չխնայելով իմ ուժերը սովետական լիարժեք կադրերի պատրաստման ու մեր ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար։

(Հարց.— Եթե Ձեր աշխատությունը «զուտ տեսական է», ապա ինչո՞ւ է անհրաժեշտ վերակառուցել այդ բոլորը)։

— Որովհետև նախ ես ասացի, թե իմ աշխատությունը չէր կապված գյուղատնտեսական պրակտիկայի հետ, իսկ հիմա գտնում եմ, որ դա զուտ թեորետիկական է, որովհետև չեմ կարողացել կապել այն գյուղատնտեսական պրակտիկայի հետ և այսօր գտնում եմ ճիշտ, որ քննադատում են։

(Բաբաջանյան.— Դուք իմ հարցին չեք պատասխանում, դուք ասում եք, որ ձեր հետազոտությունը մաքուր տեսական է, իսկ մենք ասում ենք, որ ձեր զարգացրած տեսությունը հակագիտական է։ Դրա մասին է խոսքը։ Սխալները պետք է ճիշտ խոստովանել)։

—Ես ասացի. որ ընդունում եմ իմ սխալները։ Եթե ինձ թույլ կտրվի, մի քանի խոսք կասեմ իմ մանկավարժական աշխատանքի մասին։ Ինչպես երեկ ընկ. Բատիկյանն ասաց, մեր դասագրքերը, որոնք դեռ կան հրապարակի վրա, ամբողջապես մենդելյան-մորգանյան շկոլայի դասագրքեր են։ Գրիշկոյի գիրքը, որը նույնպես չի համապատասխանում այսօրվա պահանջներին, այնուամենայնիվ օգտագործվել է մեր ուսանողների կողմից։ Մենք, 1937 թվից սկսած, գենետիկայի ծրագիր չենք ստացել, դա նույնպես խոչընդոտ է հանդիսացել։ Մասամբ իմ աշխատանքի բնույթը, ինչպես ասացի, այնպիսին է եղել, որ ազդել է իմ մանկավարժական աշխատանքների վրա։ Ինչ վերաբերում է միչուրինյան ուսմունքին, ես պրոպագանդա եմ արել, դասախոսությունների ժամանակ անցել եմ այն լրիվ կերպով առանց նրա թեզերը կասկածի ենթարկելու։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.— Ընկ. Հ. Պողոսյանի ելույթը ցույց է տալիս, որ նա դեռ լրիվ եզրակացություններ չի հանել և դեռևս չի հրաժարվել իր տեսակետներից, հակառակ իր հայտարարության, թե ընդունում է իր սխալները, հրաժարվում հակամիչուրինյան, իդեալիստական տեսակետներից բիոլոգիայի հարցերում։ Այլ կերպ չի կարելի բացատրել նրա այն հայտարարությունը, թե ինքը զբաղվել է «մաքուր տեսական հետազոտությամբ»։ Մինչդեռ բոլորի համար պարզ է, թե ինչ է նշանակում այսպես կոչված «մաքուր տեսությունը», որ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ սովետական գիտնականի միանգամայն խորթ տեսակետ գիտության նկատմամբ և որ այդ «մաքուր տեսությունը» փաստորեն նշանակում է կեղծ, հակագիտական տեսություն։

Ահա ինչու ընկ. Հ. Պողոսյանի ապոլիտիկ ելույթը ոչ մի կերպ չբավարարեց սեսիայի մասնակիցներին, որոնք նրանից սպասում էին սովետական գիտնականին արժանի անկեղծությամբ մինչև վերջ ընդունել իր սխալները։